

686


3K16
U-50

103 NOV 200

Դր. ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

(ԵՎՀԱՍՏԱՐԱԿԱՆ ՌԽԹԱԿԳԻՒԹ)



ԿՈՒԶԵՐԱՑ 1983 թ.

17 MAY 2005

ՀԱԿ
U-50

ՀՍԽՀ ՄԱՐՔՈՒԹՅՈՒՆ — ԼԵՆԻՆԻՁՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՎՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

Դր. Աւտոնան

ԿԱՐԼ ՄԱՐՔՈ

(ԿԵՆՍԱԴՐԱԿԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ)

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ
ՑՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ

ՀՐԱՄԱՆ
1933



31.07.2013

686

БІБЛІОТЕКА
Академії
УРСР


Ч9862 км



24680. 19



Чарльз Шаррер 1836 рік



Կ. Մարքս 1880 թ.



«Փիլիսոփաները մինչեվ այժմ միայն
տարբեր ձևերով բացատրել են աշխարհը。
Խնդիրն ենց այն ե, վոր փոխենք այն»:
(Մարտի 11-րդ քեզիսը մյուերախի մասին)

Կես դար առաջ, 1883 թվի մարտի 14-ին վախճան-
վեց Կարլ Մարքսը:

Մարքսի մտերիմ բարեկամ և հեղափոխական պայ-
քարի ընկեր Ֆրիդրիխ Ենդելսը հետևյալ կերպ և հա-
ղորդում Մարքսի մահը. «Մարտի 14-ին, կեսորից հե-
տո, ժամը 3-ին, առանց 15 րոպեյի, ապրոլ մտածող-
ներից մեծագույնը դադարեց մտածելուց»:

Մենք նրան մենակ թողեցինք 2 րոպեյով, և, յերբ
վերաբերածանք, նրան գտանք իր բաղկաթուի մեջ հան-
դիսու քնած—հավաքենական քնով»:

Մարքսը 19-րդ դարի ամենանշանավոր դեմքն եր:
Անդուր աշխատանքից և անհաշտ պայքարից հյուսված
նրա կյանքն անցավ հանուն հին աշխարհի փոփոխման:
Մարքսը, իր ընկերոջ՝ Ենդելսի գործակցությամբ
հայտնաբերեց այն ուժը, զոր պիտի փոխեր աշխարհը:
Դա բանվոր դասակարգն եր: Մարքսն առաջինը յեղալ,
զոր գաղմակերպեց բանվորների միջազգային բանակը.
Նա զարդնեց այն չողերը հուժկու գենքը, վորով սպա-
ռադինված միջազգային պրոլետարիատը մարտադաշտ
նետվեց՝ սոցիալիստական հեղափոխություն կատա-
րելու համար: Մարքսի խորոչներ հեղափոխական
միտքը վառվում եր ատելության սրբազն կրակով



Դեսի կապիտալիստական հասարակակարգը :Այդ կրակն առկայծեց միլիոնավոր բանվորների հեղափոխական կորովը :

Հանճարեղ Լենինի ղեկավարությամբ նախկին Ռուսաստանում—աշխարհի մեկ վեցերորդ մասում տապալվեցին կապիտալիստական կարգերը և վառվեց սոցիալիստական հեղափոխության քուրան : Յերկրագնդի մնացած 5-րդ մասում հեղափոխական բանվոր դասակարգը անողոք պայքար և մղում հանուն պրոլետարական հեղափոխության հաղթանակի : Պրոլետարական հեղափոխությունների մեր դարաշրջանը Խորհրդային Միության պայծառ որինակով ապացուցեց, վոր, հերավի, պրոլետարիատն և այն միակ հետեռղական հեղափոխական ուժը, վոր կարող և հեղաշրջել ստրկության վրա հիմնված, հասարակության արտադրողական և իմացական ուժերը կաշկանդող, կապիտալիստական հանրակարգը և ստեղծել սոցիալիստական հանրակարգ :

Մարքսի կյանքի և գործունեյության վսեմ նպատակագրումը յեղավ կազմակերպել այդ զորավոր հեղափոխական ուժը, զինել նրան իմացական այն զենքով, վոր ամենայն իրավամբ իր անունով մարքսիզմ և կոչվում :

Ամբողջ աշխարհի գիտակից բանվորները Մարքսի մահվան հիսունամյակին նորից իրենց հայացքներն են ուղղում դեսի այն յերկարառ պայքարի ճամփան, վորով անցավ իրենց մեծ ուսուցիչը :

Նորից նրանք թերթում են նրա կյանքի և գործունեյության լուսավոր եջերը, վորոնք անսպառ յեռան-

դի, անընկձելի հեղափոխական կամքի աղբյուր են հանդիսանում :

Պրոլետարիատի մեծ ուսուցչի համառոտ կենսագրության ներկա ուրվագծի նպատակն են նրա բեղմնավոր կյանքի և գործունեյության այդ եջերը հաղորդել մեր յերկրի աշխատավորներին :

Մարքսի մանկությունն անցնում եր խնդալի, նա սիրող, հոգացող հոր և քնքուց դորովալի մոր բուռն զգացմունքների առարկան եր: Մարքսի հայրը կրթված մարդ եր: Նա զերծ եր տվանդական կրտսական նախապաշարումներից և գտնվում եր 18-րդ դարի Փրանսական լուսավորական գրականության ազգեցության տակ: Հայնրիի Մարքսն ընթերցաներ մարդ եր և վորդու՝ Կարլի մեջ պատահնեկական տարիներից դարձնում եր սեր գեղի գիրքը: Սակայն Մարքսի ընդացնում միջամտություն ընդունելով, Հայնրիի Մարքսը ցանկանում եր հազորդակից լինել պրուսական կուտուրական հասարակության և ձուլիլ նրա հետ: Անչուշտ այդ հանդամանքը վորոշ գեր ունեցավ, սակայն, Մարքսի հոր դավանափոխության հիմնական շարժառիթը պետք է համարել այն, վոր քրիստոնեյություն ընդունելով, նա ձգտում եր աղատվել այն ճնշումներից, վորոնց յենթակա յեղան հրեաները, յերբ Հռենոսյան շրջանը, վորտեղ ապրում եր Մարքսի ընտանիքը, 1815 թվին Նապիկեոնի տիրակալությունից նորից անցավ Պրուսիայի ձեռքը:

Մարքսի ընտանիքը կուտուրական միջամտայր եր ներկայացնում: Նրա հայրը իրավաբան եր, վորը հետագայում դարձավ Թրիբի իրավաբանության խորհըրդատու:


Մարքսի ընտանիքը նյութապես գտնվում եր նավատական ոլայմանների մեջ, ընտանեկան մթնոլորտը չափազանց սիրառուն եր և ջերմ: այդ իսկ պատճառով

Կարլ Մարքսն իր միջնակարգ կրթությունը ստացավ Թրիբի գիմնազիայում, վորն ավարտեց 1835 թվին 17 տարեկան հասակում: Շատ սակավ տեղեկություններ կան այն մասին, թե ինչ ստացավ Մարքսն իր դըմորցական կյանքից: Նրա ավարտական վկայականը առում թ, վոր Մարքսը հաջող կերպով թարգմանում և սում եր, վոր Մարքսը հաջող կերպով թարգմանում և մեկնարանում եր հին դասական հեղինակների յերկերի դժվարին մասերն, այն մասերը, վորոնց «գեժվարի դժվարին մասերն, այն մասերը, վորոնց գեժվարի դժվարինը վոր այնքան լեզվի յուրորինակությունն եր, ըությունը վոր այնքան լեզվի յուրորինակությունն եր, վորքան խնդրի երությունը և դատողությունների ընվորքան խնդրի երությունը և դատողությունների ընթացքը»: Մարքսի ուսուցիչների կարծիքն ու դնահատականը հայտնում ե, վոր նրա ավարտական շարտականը հայտնությունները կյանքի դրությունը՝ «Պատանու դատողությունները կյանքի կոչման ընտրության մասին» հատկանշվում ե մաքերի հարստությամբ և նյութի համապատասխան չափահանությամբ:

թյամբ, սակայն նորից դրսեվորում և հեղինակին հատուկ թերությունը—արտահայտությունների չափանց նրբությունն ու պատկերավորությունը։ Այդ շարադրության գնահատականի մեջ բերլած և Մարքսի դրվածքից մի նախադասություն, վորից իմանում ենք, թե 17 տարեկան Կարլն ինչպես եր ըմբռնում կյանքի կոչման ընտրության հարցը։ Գրավոր այն հարցին, թե վորն ե «պատանի Կարլի դատողությունը կյանքի կոչման ընտրության մասին»—Մարքսը պատասխանում ե. «մենք վոչ միշտ կարող ենք հասնել այն դրության, վորին ինքներս մեղ կոչված ենք համարում։ մեր առնչությունը հասարակության հետ վորոշ չափով սկսվել ե ավելի առաջ, քան մենք ինքներս կարող ենք վորոշել այն»։ Այս նախադասությունը ցույց ե տալիս, վոր պատանի Մարքսը իր ապագա տեսության սաղմնային հղացումներն արգեն ունեցել ե դպրոցում։

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Գիմնազիան ավարտելուց հետո Մարքսը 1835 թ. աշնանը մտավ Բոննի համալսարանի իրավաբանական բաժանմունքը։ Մարքսի կյանքի այս շրջանի մասին ևս անմիջական տեղեկություններ չկան։ Բայց հոր և վորու այս, ինչպես և հետագա շրջանների, նամակադրությունը ցույց ե տալիս, վոր նրանց ջերմ հարաբերությունները վորոշ չափով սառչում են։ Բոննում Մարքսը լստ յերեսույթին ապրում եր, վորպես սովորական դերմանական բուրշ։ Հայրը Մարքսին գրած



Այն տունը, վորտեղ ծնվել է Մարքսը

Նամակների մեջ գանդատվում ե, վոր վորդին ապրում ե «վայրենի» ուսանողական կյանքով, վորն անցնում ե մենամարտություններով, պարտքեր անելով և անպահույց վոտանավորներ գրելով:

Մեկ սեմեստր Բոննի համալսարանում ուսանելուց հետո, Մարքսը հոր պահանջով փոխադրվում և Բեռլինի համալսարանը՝ ավելի հիմնովին իրավագիտությամբ և կամերալ դիտություններով զբաղվելու համար: Մարքսը կատարում է հոր պահանջը, փոխադրվում և Բեռլին, նախապես նշանվելով իր մանկության ընկերուհի Զեննի Ֆոն Վեստֆալենի հետ, վորն իրենից մեծ եր 4 տարով: Այս նշանադրությունն սկըզբում Մարքսի հորը թվում եր Կարլի ուսանողական անմիտ քայլերից մեկը, մանավանդ վոր նշանադրությունը տեղի յեր ունեցել առանց հարսնացուի՝ Զեննիի ծնողների դիտության, սակայն, հետազայում Հայնրիին Մարքսը վստահացավ, վոր իր վորդու հարսնացուն արտասովոր մի աղջիկ ե, վորն «ինչվոր համարեղ մի բան ունի», վոր նա «դյութիչ մի եյակ ե», «հրեշտակ ե՝ վոչ աղջիկ»:

Հայնրիին Մարքսը, այս վստահությունը հայտնելով իր վորդուն, հավաստիացնում եր Կարլին, վոր նրա հարսնացուն վոչ մի իշխանի հետ չի փոխի իրեն: Զեննի Ֆոն Վեստֆալենը հոր կողմից սերում եր պրուսական աղնվական ուսակցիոն ընտանիքից, իսկ մոր գծով կապված եր չուղանդական աղնվական Առհայլ հերցոգների ընտանիքին: Զեննիի ավագ յեղրայրը հետազայում դարձավ պրուսական մինիստր: Զեննին աչքի յեր ընկում արտակարգ գեղեցկությամբ, պայծառ մաքով և



Զեննի Մարքս

կայուն բնավորությամբ։ Նա թե իր գեղեցկությամբ և թե ծագումով կարող եր շատ ավելի շահավետ ամուսնություն ձեռք բերել, սակայն իր ամենաբարձր զգացմունքներից մղված, նա զոհարերեց կենսական բոլոր բարիքները և իր կյանքը կապեց Մարքսի կյանքին, վորի ապագան հոր արտահայությամբ «անհաստատ եր և լեցուն վտանգներով»։ Հիրավի, Մարքսի կյանքն ընթացավ «վտանգներով լեցուն» և այդ կյանքի անձնվեր ուղեկիցը դարձավ Զեննին—այդ «լեցութիչ աղջկը»։

ՄԱՐՔՍԸ ԲԵՌԼԻՆՈՒՄ


1836 թվի աշնանը Մարքսը մտավ Բեռլինի համալսարանը։ Հայնրիխ Մարքսը չափազանց ուշադիր կերպով հետեւում եր իր վորդու մտավոր զարդարման ընթացքին։ Նա յերազում եր տեսնել վորդուն մեծ հըռչակ ձեռք բերած, բայց նաև մտածում եր վորդու «յերկրային բարորության» մասին։ Նա նախագումար, վոր Կարլն իր արտակարգ ընդունակություններով մարդկությանը խոչոր ծառայություններ պիտի մատուցի, այդ իսկ պատճառով նա ծառանում ե վորդու «սովորական հանգաստեղծման դիմ»։ Հոր այս մտումները վորդու ապագայի մասին արտահայտվել են 1837 թվի մարտի 10-ին գրած նամակում։ «Զարժանալի յե, վոր յես իմ ծույլ բնությամբ նամակադրության մեջ կատարելապես անսպառ եմ դառնում, յերբ պետք ե քեզ գրեմ։ Յես չեմ կարող, չեմ ուղում թագացը նել իմ թուլությունը դեպի քեզ։ Յերբեմն իմ սիրութինդով ե բարախում քո և քո ապագայի մասին մտա-

ծելիս։ Յեվ, այնուհանդերձ, յես չեմ կարող ինձնից վանել դառն նախաղղացումները և յերկյուղ առաջացընող դադարաները, յերբ կայծակի նման չանթում ե այն միտքը, թե՝ համապատասխանում ե արդյոք քո դլսին և քո տվյալներին նաև քո սիրութ։ Նրա մեջ տեղ ունե՞ն արդյոք յերկնային, բայց մեզմ զգացումները, վորոնք արցունքների այս մենաստանում զգայուն մարդուն այնքան միխթարանք են պատճառում։ Այն դեմոնը, վոր ապրում ե վոչ յուրաքանչյուր մարդու մեջ, բայց քո հոգում նա անպայման կա և իշխում ե—ի՞նչպիսի յե նրա բնությունը—Փառաստակա՞ն, թե յերկնային։

... Յես հոգում եմ վոչ միայն քո խոչոր նվաճումների, այլ և քո յերկրային բարորության մասին, բայց իմ հոգու մեջ խորապես մուտք են գործել և վաղեմի պատրանքներ։ Եյապես այդ զգացմունքները մեծ մասով պատկանում են մարդկային թուլությունների շարքին և ազատ չեն ամեն տեսակի կողմնակի տարրերից—ինչպես հպարտությունը, փառասիրությունը և յեսասիրությունը...»։

Ըստ յերկույթին այդ պատրանքներն այն եյին, վոր Կարլը դառնար նշանավոր իրավաբան։ Բայց Մարքսը, թեպես և Բեռլինի համալսարանում արձանագրված եր իրավաբանական բաժանմունքում, նրա զբաղմունքների մեջ իրավագիտությունը, իրրև մասնագիտություն, յերկրորդական տեղ եր բննում։

Բեռլինում Մարքսը փոխում ե արմատորեն իր կենսաձեւ։ Նա հախուռն է պարագաներու պահպանությամբ և գիտություններով, զմիավականություններու պահպանությամբ և



փիլիսոփիայությամբ։ Ուսումնասիրում և խոալական և անդլիական լեզուները, գրականության և արվեստի պատմությունները, բայց և շարունակում և բանաստեղծություններ դրել։ 1837 թվի նոյեմբերի 10-ին հորը գրած մի նամակում նա հաշիվ և տալիս, թե ինչպես ինքն անցրեց ուսանողական յերկրորդ տարին Բեռլինում։ Այդ նամակի մեջ յերեան և գալիս նրա մտավոր աշխատանքի և արտադրողականության անսահման ծալվալը, դիտության տիրանալու անհագուրդ ձգտումը, աշխատելու անսպառ կարողությունը և ցանկությունը։

«Եեռլին գալով, —հայտնում և Մարքսը հորը, —յես խզեցի մինչ այդ իմ ունեցած կապերը, վոչ հաճույքով մի քանի այցելություններ կատարեցի և փորձեցի սուզվել դիտության և արվեստի մեջ»։ «Այս այլաղան պարապմունքների ընթացքում առաջին սեմեստրում քիչ դիշերներ չանցրի յես արթուն, քիչ մարտեր չունեցա, քիչ ներքին և արտաքին գրգռություններ չապրեցի։ Ի վերջո յես քիչ բան շահեցի, թողնելով այդ պատճառով բնությունը, արվեստը, ամբողջ աշխարհը, հրաժարվելով ընկերներից։ Այդ անդրադարձավ իմ որդանիլմի վրա։ Մի բժիշկ ինձ խորհուրդ տվեց դյուզ մեկնել և ահա, առաջին անգամ, յես դուրս յեկա այս մեծ քաղաքի գարպասներից դեպի Շարալով։ Յես չեյի կարծում, վոր այստեղ վտիտ, դալուկ պատանուց կդառնամ ամուր և առողջակազմ։

Վարադույրն ընկավ։ Իմ սրբության սրբոցն անարդար և պետք է այստեղ տեղավորել նոր աստվածներ։ Իդեալիլմից, վոր, ի դեպ ասած, յես հաղեցրի

կանտական ու Փիլիսոփական իդեալիլմով, յես այժմ անցա այն բանին, վոր գաղափարները վորոննեմ հենց իրականության մեջ։ Յեթե առաջ աստվածները յերկրի վրա եյին, ապա այժմ նրանք դարձել են յերկրի կենտրոնը . . .»։

Մարքսի լարված մտավոր աշխատանքի և հոգեկան ավըրումների բնույթը հասկանալի կդառնա քաղաքական և մտավոր կյանքի այն Փոնի վրա, վոր ապղաքական մտավոր կյանքի այն Փոնի վրա, վոր ապղաքական հասարակությունը։

Մարքսի, ինչպես և Ենդելսի գիտակցական կյանքն ակսվեց անցյալ գարի յերեսունական թվականներին։

1830 և 1831 թվականները Յելլոպալայի համար հեղափոխական պոռթկումների տարիներ եյին։ 1830 թվին Ֆրանսիան ապրեց Հուլիսյան հեղափոխությունը, վորի ալիքներն անցան Յելլոպալայի արևմուտքից ներևության մեջ։ Այդ հեղափոխության արձագանքը յեղալ նաև արևելք։ Այդ հեղափոխության արձագանքը յեղալ նաև արևելք։ 1831 թվին ընդդեմ ցարիքմի։ 1830 թվի Հուլիսյան հեղափոխությունն ինքը ավարտումն եր նախորդ՝ Ֆրանսիական Մեծ հեղափոխության, վոր իր սկզբնական չըջանում ուղղված եր Փեղալական կարգերի դեմ և վորն իր հետաղա զարդացման ընթացքում ժողովրդական մասսաների կողմից ուղղվեց բուրժուազիայի դեմ։ Ֆրանսիական մեծ հեղափոխության նշանաբանները — «յեղայրություն», «հեղափոխություն» և աղատություն», «պատերազմ պատներին, խաղաղություն խրճիթներին» — վորեղորում լատներին, խաղաղություն և աղատություն, «պատերազմ պատներին, խաղաղություն խրճիթներին» — վորեղորում լատներին, ամբողջ ֆեղալական Յելլոպալայի դեմոկրատական զանդշածներին։

Ֆրանսիային սահմանամերձ եր Հռենոսյան շրջանը, վորտեղ գտնվում եր Կարլ Մարքսի ծննդավայր թրիր քաղաքը: Այդ շրջանում Փրանսիական հեղափոխության աղղեցությունը շատ աչքառու յեր: Այդտեղ կազմակերպվեցին ժակոբենների ընկերություններ: Այդ ժրշանից բազմաթիվ կամավորներ մտան Փրանսիական հեղափոխական բանակը:

Փրանսիական հեղափոխության աղղեցությամբ անդիմական բանվորական շարժումն սկսեց աշխուժացում և վերելք ապրել: Անդիմայում 1791 և 1792 թվականներին կազմակերպվեց առաջին բանվորական հեղափոխական կազմակերպությունը՝ «Կորեսպոնդենտային» (թղթակցող) ընկերությունը»: Այդ բանվորական կազմակերպությունն իրեն այդպես եր անվանում, վորովհետև անդիմական որենքները վորեւ ընկերության արդելում ելին կազմակերպական կապ հաստատել այլ ընկերությունների կամ միությունների հետ: Եեվ ահա 1791, 1792 թվականներին կազմակերպված անդիմական բանվորական միությունները «թղթակցող» անունն ստանձնեցին, վորպեսզի խուսափած լինեն անդիմական մատնանշած որենքի ուժից: Նրանք իրար հետ կապ հաստատեցին թղթակցությունների միջոցով: Անդիմական թղթակցող ընկերությունները հարաբերությունների մեջ մտան նաև Փրանսիական ժակոբենների հետ: Եերբ 1792 թվի ողոստոսի 10-ին ֆրանսիայում հանրապետություն հռչակվեց, Լոնդոնի Կորեսպոնդենտային ընկերությունը գաղտնի ճանապարհով համակրանքի ուղերձ ուղղեց Փրանսիական Կոնվենտին: Այս հարաբերությունների ինչպես և բանվորական շարժման

ուժեղացման հանդեպ անդիմական կառավարությունը 1799 թվի որենքով արգելեց բանվորների միությունները: Յեվ 1799 թվից մինչև 1824 թիվը անդիմական բանվոր գասակարգը զուրկ եր միություններ կազմակերպելու և ժողովներ գումարելու իրավունքից:

1815 թվին Փեողալական պետությունների միացյալ ուժերը վերջնականապես տապալեցին նապոլեոնին, և Փրանսիայում վերականգնվեց Բուրբոնների միապետությունը: Փրանսիական գահ բարձրացավ Լյուլովիկոս 18-րդը: Սրա իշխանությունը ձգտում եր ժողովրդից և մասնավորապես գյուղացիությունից խլել այն նվաճումները, վոր նա ձեռք եր բերել 1789 թվի հեղափոխության զարգացման հետագա ընթացքում: Միապետական իշխանությունն աշխատում եր կաշկանդել նոր քաղաքական, հասարակական հարաբերությունների զարգացումը: Լյուլովիկոս 18-րդի քաղաքականությունն առաջացրեց նոր՝ Հուլիսյան հեղափոխությունը, վորի ընթացքում հաստատվեց սահմանադրական միապետություն: Բուրբոնների տանը պատկանող Լյուլովիկոս 18-րդի տեղը բռնեց Լյուի Ֆիլիպը, վորը բուրժուազիայի տիպիկ ներկայացուցիչն եր: Հուլիսյան հեղափոխությանը Փրանսիական աղատամիտ բուրժուազիայի հետ միասին մասնակցում ելին նաև մանր բուրժուական խավերը: Հուլիսյան հեղափոխությունը քանդեց արդյունաբերական, առևտրական և ֆինանսական բուրժուազիայի զարգացման ու հարստացման այն արգելակները, վոր ստեղծվել ելին հին կարգերի վերականգնման ձգտող Լյուլովիկոս 18-րդի իշխանության որով: Փրանսիական

բուրժուաղիան, Հուլիսյան հեղափոխության ժամանուկ վերջնականապես ապահովելով իր իշխանությունը, իր զենքն ուղղեց բանվոր դասակարգի դեմ: Ի պատասխան բուրժուաղիայի վարքագծի և քաղաքականության՝ 1831 թվին բռնկվեց Լիոնի մետաքսագործ բանվորների ապստամբությունը: Նրանք դրավեցին քաղաքը, մի քանի որ այն պահեցին իրենց ձեռքին՝ առաջարելով «Ամլել աշխատելով կամ մեռնել կովելով» նշանաբանն:

Լիոնի մետաքսագործների այդ ապստամբությունը ճնշվեց: Հուլիսյան հեղափոխության ազգեցության տակ սկսեց հեղափոխական վերելք ապրել նաև Անդրեյի բանվորական շարժումը: 1836 թվին կազմակերպվեց Լոնգոնի բանվորական ընկերությունը: Այս ընկերության գեկավարները նպատակ են զնում ստեղծել բանվորների առանձին քաղաքական կուսակցություն, բայց վոչ ուրույն դասակարգային պահանջներով, այլ իբրև առանձին բանվորական կուսակցություն, վորը պիտի բուրժուական հասարակության սահմաններում քաղաքական իրավունքներից ոգտվեր այնպես, ինչպես և մնացյալ բոլոր դասակարգերը: Թե Ֆրանսիայում և թե Անդլիայում մենք յերեսունական թվականներին հասարակական – քաղաքական կյանքի առարկեղում տեսնում ենք նոր դասակարգի՝ բանվոր դասակարգի հանդես դալը և նրա ձգտումը՝ կազմակերպվելու իբրև ինքնուրույն քաղաքական ուժ: Ֆրանսիայում այդ ձգտման ամենացայտուն ներկայացուցիչը Ռդյուստ Բլանկին եր–Փրանսիական նշանավոր հեղափոխականներից մեկը: Բլանկին մասնակցել

եր Հուլիսյան հեղափոխության: Լիոնի ապստամբության փորձից յելնելով, համոզված, վոր ամենից ավելի հեղափոխական տարրը բանվորներն են, նա սկսում է Փարիզի բանվորներից կազմակերպել հեղափոխական ընկերություններ, վորոնց մեջ մտնում են նաև այլ ազգի բանվորներ՝ գերմանացիք, չվեցարացիք, և ուշ դիացիք: Բլանկին և նրա կողմանակիցները հավատացած եյին, վոր լավ կազմակերպված ապստամբության միջոցով կարելի յետիրանալ քաղաքական իշխանության: Բլանկին իր ընկերների հետ փորձ և անում 1839 թվի մայիսին ապստամբություն բարձրացնել, սակայն այդ ապստամբությունը պարտությամբ է վերջանում: Բլանկիի անհաջող ապստամբությունից հետո ձերբակալվում են նաև մի շարք գերմանացիներ, վորոնք մասնակցել եյին ապստամբության: Դրանցից եյին նաև Շապուելը և իր ընկերները, վորոնք մի քանի ամսաց հետո հարկադրված տեղափոխվում են Լոնգոն: Այդտեղ նրանք 1840 թվի փետրվարին հիմնում են «Բանվորական լուսավորական ընկերություն»:

Նապուենի անկումից հետո, 1815 թվին, Վեննասի կոնդրեսը գծեց Յեվրոպայի նոր քարտեզը: Անգլիան իւրեց Ֆրանսիայի բոլոր գաղութները, իսկ Գերմանիան բաժանվեց յերկու մասի՝ Հյուսիսային Գերմանիայի և Ավստրիայի:

Վեննայի կոնդրեսից հետո գերմանական մտավորականության և առանձնապես ուսանողության շրջաններում առաջ յեկալ մի հոսանք, վոր ձգտում եր միավորել Գերմանիան: Այդ հոսանքը Հուլիսյան հեղափոխության աղդեցության տակ Գերմանիայի վորոնց

վայրերում արտահայտվեց ըմբոստացումներով և ապստամբություններով :

Մտավորական այդ հեղափոխական հոսանքն իրեն ավելի ուժգին զգացնել եր տալիս Հռենոսյան շրջանում և Ֆայլցում :

Հեննայի կոնդրեսի վորոշումով Հռենոսյան շրջանը հանձնվեց Պրուսիային, իսկ Ֆայլցը Բավարիային : Այդ յերկու շրջանները Փրանսիական իշխանության որով ապրել ելին ավելի աղատ քաղաքական պայմաններ, իսկ այժմ նրանք, միանալով Պրուսիային և Բավարիային, ընկել ելին դաժան ռեակցիայի լծի տակ :

Փրանսիական հեղափոխական յուրաքանչյուր բոնկում բնականաբար պետք է դարձ տար այդ շրջանների հեղափոխական տարրերի ընդդիմադիր տրամադրություններին :

Յերեսունական թվականների գերմանական մտավորականության վրա մեծ աղդեցություն ունելին Բյունեն և Հայնրիխ Հայնեն : Մտավորական հեղափոխական շարժման գրական լալազույն ներկայացուցիչներն ելին այդ յերկու դեմքերը : Լյուդվիկ Բյունեն առաջին գերմանական քաղաքական հրապարակախոսն եր, իսկ Հայնեն հեղափոխական մոտիվներ արծարծող առաջին բանաստեղծը : Լյուդվիկ Բյունեն (1786—1838) անցյալ դարի 20 թ. սկզբին գնաց Փարիզ, վորտեղ խորացան նրա աղատական հայացքները : Ֆրանսիայից վերադառնալով Գերմանիա, նա սկսեց իր քաղաքական հայացքներն արծարծել մի շարք հողվածների մեջ . դրաքննական ճնշումների պատճառով դեղարվեստական ճեսով դրված այդ հողվածները խարազանում ելին

գերմանացիների քաղաքական անտարբերությունը, բոնապետությունը և գրաքննական սահմանափակումները :

Հուլիսյան հեղափոխությունից հետո 1838 թվի աշնանը Բյունեն մեկնեց նորից Փարիզ, վորտեղ սկսեց գրել իր «Նամակները Փարիզից», այդ փայլուն, կըրքում նամակները հսկայական աղդեցություն ելին գործում յերիտասարդության վրա, այդ շրջանում Բյունեն դառնում և «Յերիտասարդ Գերմանիայի» քաղաքական ականավոր ներկայացուցիչը : Հայնեն նրան անվանում եր «Հեղափոխական մրրիկի կոչնակ» . Գերմանիայի աղատական բյուրդերությունը նրան համարում եր իր ղեկավարը : Փարիզում Բյունեն ծավալուն պրոպագանդ եր մզում գերմանական բանվորների և արհեստավորների շարքերում, նա գաղտնի բանվորական ընկերությունների մեջ քարոզում եր Գերմանիայի քաղաքական միավորումը հեղափոխության միջոցով : Իր կյանքի վերջին տարիներին, յերբ սլուղետարական շարժումը ծավալվել եր, Բյունեն հեռանում ե հեղափոխական գործունեյության ասպարեզից և սկըսում և քարոզել աղատության և կրոնի միացումը, «Ժողովուրդների քրիստոնեյական յեղայրությունը» :

Հայնրիխ Հայնեն (1797—1856), այդ հոչակավոր գերմանական բանաստեղծը և հրապարակախոսը նույն Հռենոսյան շրջանից եր—Դյուսելդորֆ քաղաքից : 1824 թվին նա ավարտեց Գյոթինգենի համալսարանի երավաբանական բաժանմունքը . ծնված հրեյական ընտանիքում՝ նա քրիստոնեյություն ընդունեց, վորպեսի «Յելբոպական կուլտուրայի մեջ վոտք դնելու

Համար մուտքի տոմս ստանա»։ Հուլիսյան հեղափոխությունից հետո Հայնեն նույնպես շտապեց Փարփիդ, վորի հեղափոխության լուրը «ամենակատաղի հրդեհ եր վառել նրա հոգում»։ Փարփում Հայնեն ավելի մոտիկից ծանոթացավ Փրանսիական ուստուպիական սուցիալիզմի այլևայլ հոսանքների և ներկայացուցիչների հետ։

Փարփում նա սկսեց դրել իր քաղաքական թղթակշությունները և աշխատում եր Փրանսիական ու դերմանական հասարակությունների միջև կուլտուրական մերձեցում ստեղծել։ Այդ թղթակշությունների մեջ նա արտահայտում եր Գերմանիայի բուրժուազիայի հեղափոխական ձգտումները։ Փարփում նա, Բյունեյի հետ միասին, նույնպես պլրոպազանդ եր մղում գերմանական արհեստավորների և բանվորների մեջ, սակայն շուտով հեռանում ե Բյունեյից և հեղափոխական աշխատանքից ու քաղաքական պոելիայից շրջադարձ և կատարում դեպի անհատական սոմանտիկական քնարերգությունը։

Հայնեյին թվում եր, վոր «միտումավոր քաղաքական սուեդիան «կաչկանդում ե» իր մուսաներին՝ աննպատակ սավառնելու աշխարհի վրա»։

Յերբ 1843 թվի աշնանը Մարքոս տեղափոխվեց Փարփի և ձեռնարկեց «Գերմանա-ֆրանսիական տարեգրին» հրատարակմանը, նա հանդիսի աշխատակից դարձրեց նաև Հայնեյին, վորի հետ մտերմական կապերով կապվեց մինչև նշանավոր բանաստեղծի մահ։ Մարքոսի ուժեղ ազդեցության ներքո Հայնեն նորից վերադարձավ քաղաքական սուեդիային և սկսեց ալելի

բարձր ու փայլուն գեղարվեստական ձեռվ արտահայտել վեր յելնող բանվոր դասակարգի հեղափոխական տրամադրությունները։ Հայնեն իր կոչումը՝ վորպես պայքարի բանաստեղծի՝ բնորոշում եր հետևյալ կերպ։ «Ուսմանտիմի հաղարամյա թագավորությունը վերջացավ և յես նրա հեքյաթային թագավորն ելի, վորը վարելեցրեց իր թաղը»։

Մարքոսի աղդեցության տակ մոտենալով պրոլետարիատի խեղողիքիային, Հայնեն չկարողացավ հաստատապես վորդեգրել Մարքոսի աշխարհայացքը։ Նա դիտակցում եր, վոր բանվոր դասակարգը պատմական դեր ունի կատարելու, նա հավատում եր կոմունիզմի հաղթանակին, որհերդում եր մարդկային պատմության նոր դարադրիլի գալուստը, բացականչելով։ «Թողի խորտակի այդ հին աշխարհը, վորի մեջ կորչում և առաքինությունը, իշխում ե յեսասիրությունը, մարդը չահագործում և մարդուն»։ Բայց միաժամանակ այդ մեծագործույն քնարերգուն սոսկումով եր պատմերացնում բանվորների իշխանությունը։ Նա ասում է երացնում բանվորների իշխանությունը, իշխանության գլուխ գալով, անել։ «Բանվորները, իշխանության գլուխ գալով այն ցնուրտին, նրանք կիսորտակեն արվեստի բոլոր լինայաբար գիշուր-միշուր կանեն գեղեցկության բոլոր մարմարյա արձանները, վորոնք այնքան թանկ են իմ մարմարյա արձանները, վորոնք այնքան թանկ են իմ մարմարյա արձանները, վորոնք այնքան սիրելի յեն բարսական խաղալիքները, վորոնք այնքան սիրելի յեն բարսական խաստեղծի համար։ Նրանք կկոտրեն իմ դափնեվարդի սպուրակները և նրանց տեղ կսկսեն գետնախնձոր ցանկությունը»։

Յերբ Մարքոսը մտավ համալսարան, գերմանական առաջավոր յերիտասարդությունը, հեղափոխական

շարժումների պարտություններից հետո անձնատուր յեղավ գերազանցապես գիտության՝ նրանով լուսաբանելու շարժումների պարտության պատճառները:

Բեռլինում Մարքսը շիման մեջ մտավ «Ճախ հեղեղականների» խմբակի հետ: Այդ խմբակի ականավոր անդամներից եյին պատմաբան Կարլ Կյուլպերը և փիլսոփիա Բրունո Բառերը: Այդ խմբակի աղղեցությունը զդալի յեղավ Մարքսի վրա, բայց մյուս կողմից խմբակի անդամներն ևս ստիպված յեղան հաշվի առանելու իրենցից տասը տարով կրտսեր Մարքսին, վորին եր ընկերները վորակում եյին վորպես «գաղափարների քայլող շտեմարան»: Դեպի Մարքսը տածած ակնածական վերաբերմունքի արտահայտություն և այն փաստը, վոր նշանավոր պատմաբան Կյուլպերն «իր ընկերոջը, Կարլ Հայնրիխ Մարքսին թրիբից» նվիրեց իր անողոք պամֆլետը «Թրիբիի Պրուսացու մահվան հարյուրամյակի առթիվ»:

«Յերիտասարդ հեղեղականների» խմբակը փորձում եր Հեգելի փիլիսոփայության դրությունների մշակումից աթելստական և հեղափոխական հետեւթյուններ անել: «Յերիտասարդ հեղեղականները», Հեգելի փիլիսոփայությունից յելնելով, քննադատության եյին յենթարկում իրենց ժամանակակից Գերմանիայի սոցիալ-քաղաքական կացությունը: Իրավես նրանք արտահայտում եյին զարգացող բուրժուազիայի քաղաքական հասարակական ձգտումներն ու բաղադանքները: Պրուսական ռեակցիոն կառավարությունը հալածում եր ձախ հեղեղականներին, վորոնց հայացքներն արագորեն զարգանում եյին ու տարածվում:

1841 թվի ապրիլի 15-ին Մարքսը, չցանկանալով բեռլինի ռեակցիոն համալսարանում քննություն տալ, Յենայի համալսարանից ստայավ դոքտորական աստիճան՝ ներկայացրած իր դիսերտացիայի համար՝ «Դեմոկրիտի և Եպիկուրի բնա-վիճակության մեջ Մարքսը կանգնած եր Հեգելյան իդեալիստական փիլիսոփայության հողի վրա»:

Սակայն արդեն այդ աշխատությունը ցույց ե տալիս Մարքսի ստեղծագործական մտքի կարողությունը: Այդտեղ Մարքսը բացասարար ե վերաբերվում դեպի Դեմոկրիտի փիլիսոփայությունը և, ընդհակառակը, համակրանքի վերաբերմունք ե ցուցաբերում դեպի Եպիկուրը: Դեմոկրիտի փիլիսոփայությունը վանում եր Մարքսին, վորովհետեւ, իր ասելով, այդ փիլիսոփայությունը զուրկ ե «ներգործական եյությունից», մինչդեռ Եպիկուրի փիլիսոփայությունը քաշում եր Մարքսին հենց այդ իր «ներգործական եյությամբ», վորը մզում եր Եպիկուրին ըմբռուտանալու կրոնի ճընչութի դեմ: Մարքսը մտադիր եր իր դիսերտացիային կցել մի առաջաբան, վորի մարտական կրակուշունչը զայլեցնում ե ընթերցողին: «Փիլիսոփայությունը, — ասում ե Մարքսն այդ առաջաբանում, — քանի թեկուղ մեկ կաթիլ արյուն ե խաղում նրա ամենայն ինչ նվաճող, բացարձակապես աղատ սրտում, միշտ Եպիկուրի հետ միասին կղիմի իր թշնամիներին՝ ասելով նրանց. «անաստված ե վոչ թե նա, ով արհամարհում ե ամբոխի աստվածներին, այլ նա, ով ամբոխի աստվածների մասին ունեցած դատողություններն

ե կրում»: Փիլիսոփիայությունը բացահայտորեն բաժնում և Պրոմեթեոսի այն խոստովանությունը, թե՝

«Պարզապես ասած, յես ատում եմ բոլոր աստվածներին»:

Իսկ նրանց, վորոնք գանդատվում են փիլիսոփիայության ըստ յերեսութին դեպի վատը փոխված դրությունից, նա պատասխանում է, ինչպես Պրոմեթեոսը՝ աստվածների սպասավոր Հերմեսին — «Բայց դիտցիր, Հերմես, վոր յես իմ պատիժն ու շղթաները չեյի փոխի քո դրության հետ:

Պրոմեթեոսը — մեծագույն սուրբն եւ մարտիրոսը փիլիսոփիայական որացույցում»—այսպես եւ վերջանում իր մարտաշունչ առաջաբանը 23 տարեկան Մարքսը:

Համալսարանն ալյարտելուց հետո Մարքսը մտադիր եր ինքն իրեն նվիրել ակադեմիական գործունեցության և պրոֆեսորական կոչում ստանալ: Այս նպատակով նա Բեռլինից տեղափոխվեց Բոնն, սակայն շատ շուտով Մարքսը հրաժարվեց պրոֆեսոր դառնալու մտադրությունից: 1841 թվի ամառը Գերմանիայի մի քանի համալսարանների աստվածաբանական բաժանմունքներն արշավանք սկսեցին Մարքսի ընկեր—Բրուն Բառերի դեմ, վորը քննադատել եր ալիտարանը: Այդ քննադատության պատճառով Բրունը Բառերին դրկեցին Բոնի համալսարանում դասախոսություններ կարդալու իրավունքից: Այս փաստից Մարքսն արեց այն հետևությունը, վոր Գերմանիայում, տիրող ոեակացիայի պայմաններում, անկարելի յե զբաղվել ակտա-

դեմիական աշխատանքով, ուստի նա գերադասեց Ընտրել գրական-հրապարակախոսական ասպարեզը: Նա իր առաջին հոդվածը դրեց 1842 թվի փետրվարին «Գերմանական Տարեդրքի» համար, վորի հրատարակիչը Առնոլդ Ռուդենն եր: Հոդվածն ուղղված եր կառավարական գրաքննության դեմ: Բայց գրաքննական պատճառներով այդ հոդվածը լույս չտեսավ «Տարեդրք» քում», այլ տպագրվեց «Շվեյցարիայում 1843 թվին յերկհատոր մի ժողովածուի մեջ՝ «Անեկդոտներ» խորագրով:

Հոենոսյան շրջանի առևտրաւարդյունաբերական արմատական բուրժուազիան 1842 թվին հիմնեց «Հոենոսյան լրագիրը», վորի նպատակն եր մի կողմից հակադրվել «Քյոլնի լրագրին», վոր պրուսական հետադիմական կառավարության հանդեպ ստորագրած դիրք եր բոնել, մյուս կողմից, պայքարել արսուլյուտիզմի ու պաշտպանել հոենոսյան բուրժուազիայի շահեգեմ ու պաշտպանել հոենոսյան պատճենում եր լնդհանուր Ընտրարը: Այդ լրագիրը պահանջում եր լնդհանուր Մարքսը, պրոկան իրավունք, քաղաքական ազատություններ, պրոկան իրավունք, հարկ և այլն: Լրագրի հիմնագրեսիվ—յեկամտային հարկ և այլն: Լրագրի հիմնագրեներն եյին Հոենոսյան ուղեկերպ բուրժուազիի դիրքների և յեկամտայի գերիշտությունների կամպհառութենք, Մովիսոնը և ուներկայացուցիչներ կամպհառութենք, Մովիսոնը և ուներկայացուցիչները: Մարքսը հրավիրվեց աշխատակցելու: Լրաբեները: Մարքսը հրավիրվեց աշխատակցելու: Լրադրի զեկալարությունը հանձնվեց յերիտասարդ փիլիտի գրականագետների՝ Գեորգ Յունգին, Դաստիարակությունը Ուլպենհայմին, Մովիսոն Հեսսին և Ռուտենդրգին: Լրագրի ամենաականավոր զեկալարն եր Մովիսոնը: Մարքսը մի առ ժամանակ լրագրին աշկես Հեսսը: Մարքսը մի առ ժամանակ լրագրին աշխատակցում եր Բոնից՝ թղթակցություններով, բայց

արդեն 1842 թվի հոկտեմբերին դառնում ե նրա գլխավոր խմբագիրը և Բոննից տեղափոխվում ե Քյոլն: Նա, խմբագիր դառնալով, անմիջապես փոխում ե Արագրի ուղղությունը, ամենարմատական պայքար սկսելով տիրող քաղաքական-հասարակական կարգերի դեմ: Նա դառնում ե այդ լրագրի ականավոր հրապարակագիրը, չնորհիվ իր ուժեղ տրամաբանության, հախուսն խառնվածքի ու փայլուն հոդվածների: Մուզելի գյուղացիների շահերի պաշտպանության նվիրված հոդվածաշարքը և այլ հոդվածներն առիթ են դառնում, վոր կառավարությունը լրագրի վրա հաստատեր կրկնակի, յեռակի գրաքննություն: Լրագրի հրատարակիչները պահանջում են Մարքսից մեղմացնել լրագրի բնույթը, սակայն նա չի համաձայնում և հրաժարվում ե խմբագրությունից ու թողնում ե լրագրերը:

Մարքսը «Հոկտեմբերին» աշխատակցելու այն խմբագրելու շրջանում միայն ծայրահեղ արմատական դեմոկրատ եր. նա, ինչպես ինքն ե ասում, «ծանոթ չեր կոմունիզմին, բայց այդ կոմունիզմն առավ իր պաշտպանության տակ, յերբ մի պահանուական լրագրի բանավեճ սկսեց Հեսսի հետ: Այդ բանավեճին միջամտելով, Մարքսը զրում եր. «Դուք իրավունք չունեք հարձակվելու կոմունիզմի վրա: Յես կոմունիզմի հետ ծանոթ չեմ, բայց կոմունիզմը, վոր եր դուք վրա գրել ե ճնշվածների պաշտպանությունը, չի կարող այդպես թեթևամտորեն դատապարտվել: Գետք և հիմնականորեն ծանոթանալ այդ հոսանքի հետ, նախքան այն դատապարտելը»: Այս տօղերից

յերեսում ե, վոր Մարքսն արգեն «Հոկտեմբերին լրագրի» խմբագրության մեջ աշխատելու շրջանում իր հետաքրքրությունն ուղղել եր դեսպի կոմունիզմը:

Մարքսի հեռանալը լրագրի խմբագրությունից չըփրկեց այն, և 1843 թվին կառավարությունը փակեց լրագրերը:

«Հոկտեմբերին լրագրին» աշխատակցելու շրջանում Մարքսը համոզվեց, վոր ինքը բավականաչափ ծանոթ չե անոնեսական ինոգիլներին և սոցիալիստական սիստեմներին: «Հոկտեմբերին լրագրից» հեռանալուց հետո անհարին համարելով Գերմանիայի քաղաքական պայմաններում ազատ հրապարակախոսությամբ և գրական աշխատանքով զբաղվելը, նա վորոշեց տեղափոխվել Փարիզ և այնուեղ Առնոլդ Ռուգեյի հետ հմտնել մի հանդես «Գերմանա-ֆրանսիական Տարեգրքեր» անունով:

ՄԱՐՔՍԻ ՓԱՐԻԶՈՒՄ

Մարքսը 1843 թվին ամուսնացավ Ջեննի Ֆոն-Վեստֆալենի հետ և մեկնեց Փարիզ՝ սկսելու ձեռնարկած հանդեսի հրատարակությունը: 1844 թվին լույս տեսավ այդ հանդեսի առաջին կրկնակ համարը, վորից հետո նա դադարեց հրատարակվելուց այն պատճառով, վոր Մարքսի և Ռուգեյի միջև սկզբունքային հողի վրա տարածայնություններ ելին ծագել:

«Գերմանա-ֆրանսիական տարեգրքերի» մեջ Մարքսը զետեղեց «Հեգելի իրավունքի փիլիսոփայության բնադրատության առքիվ» և «Հրեյական հարցի մասին» հոդվածները: Այդ հոդվածները, վորոնք տար-



բեր նյութեր են շոշափում, շաղկապված են իրար իրենց գաղափարական եյությամբ։ Նրանք ցույց են տալիս, վոր Մարքսն արդեն ծայրահեղ դեմոկրատից սկըսել եր կոմունիստ դառնալ և հեղեղականությունից թեքվել դեպի իր սեփական աշխարհայացքի հիմունքների ձևակերպումը։ Ըստգեյին գրած իր նամակների մեջ նա անհրաժեշտ է համարում, վոր հեղափոխական ոպոզիցիան վոչ միայն դրական սիստեմներ կառուցի, այլ «անխնա կերպով քննադատի գոյություն ունեցող ամեն բան, անխնա այն իմաստով, վոր այդ քննադատությունը չի վախենում վոչ իր առաջացրած հետեւանքներից» և վոչ ել գոյություն ունեցող իշխանությունների հետ ընդհարվելուց։ «Հեղեղի իրավունքի փիլիսոփայության քննադատության առթիվ» հոգվածում Մարքսը պաշտպանում է այն միտքը, թե իրականության հարցերը փիլիսոփայական դատողություններով չեն, վոր վորոշվում են։ Այս յելակետն ունենալով, Մարքսը աշխատում է քննադատությունը դնել կոնկրետ պատմական հողի վրա։ «Քննադատության զենքըն, — ասում են նա, — չի կարող, հարկավ, փոխարինել զենքի քննադատությունը։ Նյութական ուժը պետք է տապալվի նյութական ուժի միջոցով, բայց տեսությունն ել նյութական ուժ և դառնում, յերբ նա ընդգրկում է մասսաներին»։ Իսկ տեսությունը, Մարքսի կարծիքով, կարող է տիրել մասսաներին, «յերբ նա արմատական ե դառնում»։ «Հրեյական հարցի մասին» հոդվածում նա իր տեսակետներն այդ հարցի վերաբերյալ հիմնալորում ե վոչ թե այդ հարցի կրոնական կամ ազգային կողմերի վրա, այլ նրա տնտեսական

ըմբռնումով։ Այս հոդվածում Մարքսը հայտնում է այն միտքը, վոր վոչ թե գաղաքացիական հասարակությունն ե գերիշխում պետության վրա, այլ, ընդհակառակը, պետությունը՝ հասարակության վրա։ Նա ապացուցում է, վոր մարդկային հասարակության զարգացման նորագույն շրջանում հակադրությունը հասարակության և պետության միջև ավելի սրվեց և ուժեղացավ։ Հասարակական անհշտանության և պետական ճնշման միջև դոյցած հակասությունը կարող է վերանալ այն ժամանակ, յերբ հասարակությունը կազմակերպվի գիտակցորեն ղեկավարվող հիմունքներով, և աղատագրված մարդը դառնա տերն իր կյանքի կազմակերպության։

Մարքսը, յերբ լույս եր ընծայում իր հոդվածները «Գերմանա-ֆրանսիական տարեգրերում», նա արդեն վորոշ չափով լրացրել եր տնտեսական գիտությունների այն բացը, վոր նա զգում եր Քյոլնում՝ «Հոենոսյան լրագիրը» խմբագրելիս։ Նա զրադիլել եր քաղաքատնեսությամբ և ծանոթացել առցիալիստական տարբեր սիստեմներին։ Փարիզի միջավայրում Մարքսը հնարավորություն ունեցավ քննադատորեն ստուգելու իր տեսական հայացքները։ Փարիզն այդ ժամանակ դասակարգային սուր պայքարի և բաղկառմաների մի վայր եր հանդիսանում։ Բանվորների բազմաթիվ գաղտնի կազմակերպությունները սուր և հեղափոխական կերպով եյին դնում սոցիալական հարցերը և նրանց լուծումը։ Նրանք պահանջում եյին անհատական սեփականության վերածումն հանրային սեփականության։ Փարիզի պայմաններում Մարքսն իր

Հայացքն ուղղեց դեպի այն ուժը, վոր կարող եր հեղաշրջել հասարակական կյանքը և փելիսովիայության կողմից ազդարարված մարդու ազատագրումը կատարել, դա «սրուետարիատն եր»: Ահա այս շրջանում եր, վոր Մարքու հեղելան փելիսովիայությունից թեքվում երկապի պատմության մատերիալիստական ըմբռնման հիմունքների մշակումը:

ՄԱՐՔՍԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՆԳԵԼՍԻ ՀԵՏ

1844 թվին Փարիզում տեղի ունեցավ Մարքսի հանդիպումը Ենգելսի հետ: Ենգելսը, Բեռլին անցնելիս, մտավ Փարիզ՝ հատկապես այցելու Մարքսին. մինչ այդ նրանք նամակագրության մեջ եյին դաշնութում:

Ենգելսը ծնվել է 1820 թվի նոյեմբերի 28-ին Հոկտոբերին գալառի հյուսիսային մասի Բարմեն քաղաքում: Այդ գալառը, վարտեղ ծնվել եր. նաև Մարքսը՝ Գերմանիայի տնտեսապես ամենազարգացած շրջանն եր. այդտեղ ուժեղ կերպով բարախում եր քաղաքական կյանքի զարկերակը: Այդ գալառը հարուստ եր մետաղի և ածխի հանքերով ու գտնվում եր Հոենուս գետի ջրային ճամփի վրա: Այդտեղ եր, վոր առաջին հերթին սկսեց զարգանալ խոշոր արդյունաբերությունը: Հոենոսի աճող բուրժուազիան ընդդիմագիր եր և թշնամի Փեոդալիզմին ու սլրուսական բըռնապետության, վորովհետեւ նա ավելի սրբը կերպով եր զգում ֆեոդալական կարգերի կաշկանդող պայմանները զարգացող խոշոր արդյունաբերության համար: Մյուս կողմից Հոենոսյան գալառի մերձակայությունը:



Փր. Էնցելս և հաջող 40-ի թ.

Ֆրիդրիխ Խնդելս 1840-ական թվ. սկզբին

Ֆրանսիային, ուր բուրժուազիան իր հեղափոխությունն եր կատարել, զարկ եր տալիս Հռենոսյան առետրա-արդյունաբերական գասակարգի քաղաքական տրամադրությունների արմատականացմանը. այդտեղ պահպանվել ելին Փրանսիական հեղափոխության ավանդությունները: Խոչոր արդյունաբերության զարգացման հետևանքով Հռենոսյան գավառում առաջ եր յեկել ստվար պրոլետարական բանակ:

Ենդեսի հայրը գործարանատեր եր, նա բողոքական եր, կրօնասեր մի մարդ, վոր իր մեջ միացնում եր գործնականությունը բարեպաշտության և ավետարանական խորհրդածությունների հետ: Հայրը ֆրիդրիխին մի կողմից ներշնչում եր կրօնական վորդի, մյուս կողմից նրան պատրաստում եր առետրա-արդյունաբերական գործունեյության համար: Այս նպատակով նա վորդուն, 17 տարեկան հասակում, տակալին գիմնազիան չավարտած, ուղարկում ե Բրեմեն քաղաքը, վոր Գերմանիայի առետրական խոչոր կենտրոններից մեկն եր: Այդտեղ պատահի ֆրիդրիխը հարկադրված ել լինում 3 տարի աշխատելու առետրա-կան մի տան մեջ, վորպես գործակատար: Ֆրիդրիխ Ենդելսը Բրեմենում սկսում է զբաղվել ինքնազարգացումով և ամբարում է փիլիսոփայական, քաղաքական դիտելիքներ: Բրեմենում նա յենթարկվում ե Բյունեյի, Հայնեյի ազդեցության և թոթափում ե կրօնա-կան նախապաշտամուներն ու տոգորվում ե ազատա-տենչ ձգտումներով: Ենդելսը 1841 թվին մեկ տարով մանում է զինվորական ծառայության՝ գվարդիական հրետանին—Բեռլինում, այդտեղ նա չփառն մեջ

մանում յերիասարդ հեղեղականների հետ և դառնում է փիլիսոփայական այդ խմբակի կողմնակից:

1842 թվին, վերջացնելով իր զինվորական ծառա-յությունը, Ենդելսը մեկնում է Անգլիայի Մանչեստր քաղաքը, ուր գործի յե մտնում մի արդյունաբերական ձեռնարկության մեջ, վորի բաժնետերերից մեկն իր հայրն եր: Անգլիայում Ենդելսը ծանոթանում է ուսու-պիտական սոցիալիզմին և չարտիստական բանվորական շարժմանը, նա սովորում է կապիտալիստական Անգ-լիայի բանվորական կյանքի ուսումնասիրության մեջ և հետաղոսում է կապիտալիստական արտադրության յեղանակի մեխանիկան, նա չըջում է բանվորական թա-ղերը, գիտում է բանվորների ծայր աստիճանի աղքա-ղերը, գիտում է տառապանքները: Նա մանրազնին ու-սությունը և տառապանքները: Նա մանրազնին ու-սումնասիրում է բանվոր դասակարգի վերաբերյալ հրատարակված անգլիական բոլոր պաշտոնական տե-ղեկությունները և փաստաթղթերը: Նա աշխատակ-ղեկությունների կուսակցության որդան՝ «Հյու-ցում և չարտիստների կուսակցության որդան»՝ «Հյու-ցում և իսայի Աստղին» և Ռոբերտ Ուուկնի «Նոր Բարոյական Աշխարհին»:

Առողջությունը և Սարքսի հրատարակած «Գեր-մանա-ֆրանսիական տարեգրքերի» մեջ նա զետեղում և «Քաղաքատնտեսության քննադատության ուրիշ-գծեր» հոդվածը, վորի մեջ առետառը բացահայտ խա-բերայություն ե անվանում, իսկ բուրժուական քաղա-քատնտեսությունն այդ խաբերայության տեսական սիստեմը: Իր գիտողություններն Անգլիայի բանվոր-ների տնտեսական զրության և քաղաքական կացու-թյան մասին նա լույս և ընծայում առանձին որքով՝

«Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում» վերնաբռով։ Այդ աշխատությունը փայլուն, դասական դարձած մի գործ ե, վորով Ենդելսը մերկացրեց կապիտալիստական հասարակակարգի մեխանիզմը։ Գիրքը հարուստ փաստական նյութով, անողոք և ցնցող գույներով նկարում է անգլիական սլուլետարիատի անլուր տառապանքների պատկերը։ Այդ աշխատության մեջ Ենդելսը ցույց է տալիս, վոր պրոլետարիատը՝ կապիտալիստական հասարակության մեջ իրավադուրկ, չահակործվող, թշվառության ճիրանների մեջ հեծող այդ դասակարգը ինքը միայն կարող է ազատադրել իրեն, իր սեփական քաղաքական շարժումով։ այդ շարժումը սոցիալիզմն ե, սակայն սոցիալիզմը միայն այն ժամանակ ուժ կդառնա, յերբ նա հանդիսանա բանվոր դասակարգի դիտակցության երթյունը և քաղաքական շարժման նպատակը։

Մարքսը Փրանսիական սոցիալիստական շարժման պատմության և մասնավորապես Փրանսիական հեղափոխության պատմության մանրադնին ուսումնասիրության հետևանքով և Ենդելսն անգլիական սոցիալիզմի, բանվորական շարժման և քաղաքատնտեսության ուսումնասիրության չնորհիվ իրարից հեռու և անկախ հանգում են այն յեղակացության, վոր պրոլետարիատն ե այն դասակարգը, վորի սոցիալիստական շարժման հաղթանակը կարող է ազատադրել նրան և նրա հետ ամբողջ աշխատող մարդկությունը կապիտալիստական չահակործումից։

Պրոլետարիատի պատմական հեղափոխական այդ

գերի ըմբռնումը նրանք հիմնավորել ելին իրենց նոր փիլիսոփայական հայացքների ստեղծումով։

Յերբ Մարքսն ու Ենդելսը 1844 թվին հանդիպեցին իրար, նրանց գաղափարական մերձավորությունը հիմք յեղավ և նրանց անձնական մտերմության այդ անխղելի մտերմությունը տևեց մինչև նրանց կյանքի վերջը։

Հենց վոր Մարքսն ու Ենդելսը իրենց հանդիպման ընթացքում տեսան իրենց գաղափարական ընդհանրությունը և իրենց հայացքների զուգադիպությունը, նրանք անհրաժեշտություն զգացին շարադրել իրենց այդ հայացքները, վորով մի կողմից պետք է պարզաբանած լինելին իրենց սեփական հայացքները, մյուս կողմից՝ իրենց քննադատության զենքն ուղղելին իրենց հայացքների հակառակորդների տեսակետների դեմ։ Զեռնարկելով այդ աշխատանքին, Մարքսն ու Ենդելսը դրեցին «Սրբազն ընտանիքը կամ քննադատական քննադատության քննադատումը»։

Այդ աշխատությունը լույս տեսավ 1845 թվին Ֆրանսկիթուրտում։ «Սրբազն ընտանիքը»—դա Բառեր յեղբայրներն ելին, վորոնք քարոզում ելին, վոր քննադատությունը պետք է վեր լինի իրականությունից և միայն հայեցողարար քննի իրականությունը ու նրա մեջ կատարվող յերկույթները։

Բառեր յեղբայրներն արհամարհանքով ելին վերաբերվում դեպի բանվոր դասակարգը, համարելով այն վոչ քննադատող մի զանդված։ Մարքսն ու Ենդելսը «Սրբազն ընտանիքի» մեջ իրենց քննադատական զենքըն են ուղղում այդ տեսակետի դեմ, առաջադրելով

Բառեր յեղայրների կրավորական, հայեցողական քննադատության դեմ ներգործական, պայքարի հայցակետը:

Այս աշխատության մեջ պարզ կերպով յերևան ե գալիս այն հանդամանքը, վոր Մարքսն ու Ենդելսը քննադատորեն հաղթահարել ելին իրենց ժամանակի սոցիալիստական հոսանքները. նրանք այդ աշխատության մեջ հանդես են գալիս վորպես պրոլետարիատի դիտակցական քաղաքական պայքարի դաշտավայրախոսներ:

Յերբ դադարեց «Գերմանա-Փրանսիական տարեպըրքեր» հանդեսի հրատարակումը, Մարքսը սկսեց աշխատակցել Փարիզում գերմաններն լեզվով լույս տեսնող «Հառաջ» թերթին: Այդ թերթի հրատարակիչ վորմ Յերնշտայնը իր թերթում տեղ տվեց հեղափոխական մտքի ներկայացուցիչներին:

Այդ լրագրի հեղափոխական բնույթը իր վրա դրավեց պրոլետական կառավարության ուշադրությունը: Վերջինիս պահանջով կառավարությունը արտաքսեց Ֆրանսիայի սահմաններից լրագրի մոտիկ աշխատակիցներից մի քանիսին, նրանց թվում և Մարքսին: Նյութական հոգսերով ծանրաբեռնված, բայց գիտելիքների խոշոր պաշտոնվ բեռնավորված, Մարքսը հարկադրված թողեց Փարիզը. նա փնտրեց նոր ապաստան: Մարքսը տեղափոխվեց Բրյուսել:

ՄԱՐՔՍՆ Ա.ՔՍՈՐԱՎԱՅՐՈՒՄ

Բրյուսելում, հանդիպելով նյութական անապահության և վոստիկանական հալածանքների, Մարքսը շարունակում է աշխատել վորպես դիտական հետազոտող և քաղաքական գործիչ:

1845 թվի գարնանը Բրյուսել յեկավ նաև Ենդելսը: Մարքսն ու Ենդելսը իրենց գիտական կարևորագույն խնդիրն ելին համարում իրենց հաշիվները մաքրել այն ժամանակվա գերմանական փիլիսոփայական աշխարհում ազդեցիկ ուղղության՝ յերիտասարդ հեղեղական ների դպրոցի հետ և շարադրել իրենց սեփական փիլիսոփայությանը. նրանք ձեռնարկեցին լիսոփայական աշխարհահայցը. նրանք ձեռնարկեցին լիսոփայական փիլիսոփայության (Շտիոներ, Ֆյուրբախ, Բաուեր) ֆինադատությունը:

Ահա թե ինչ ե ասում այդ մասին Մարքսը. «Մենք վորոշեցինք միասին դրել մի գիրք, վորպեսզի ցույց տանք, թե վորքան մեր հայացքները հակադիր են գերմանական փիլիսոփայության իդեոլոգիական հայացքներին, այլ խոսքով, վորպեսզի մաքրենք մեր հաշիվներին, այլ խոսքով, վորպեսզի մաքրենք մեր հաշիվները մեր նախորդ փիլիսոփայական հայացքների հետ: Այդ մտադրությունը մենք իրագործեցինք հանդամանաբեկություն քննադատելով հետհեղելյան փիլիսոփայությունը. ձեռագիրը, վոր բաղկացած եր յերկու սովոր հատուններից, վաղուց արդեն գոյնվում եր Վեստֆալիա. յում, ուր յենթադրում ելինք այն հրատարակել, յերբ մենք տեղեկություն ստացանք, վոր փոխված հանդամանքները խանդարեցին տպագրությունը:

Մենք ձեռագիրը հանձնեցինք մկների կրծող քննադատության և այդ ավելի հաճույքով արինք, քանի դատության և այդ ավելի հաճույքով արինք, քանի

զոր մենք հասել ելինք մեր գլխավոր նպատակին, մենք ընդհանուր յեղակացության ելինք յեկել իրար հետ»։ Այդ մասին նույնն է ասում և Ենդելու. «Մենք բնակ մատղիր չելինք նոր զիտական հետևանքները հաստ դրբերի միջոցով աղղարարել զիտական աշխարհին։ Ընդհակառակը, մենք արդեն խորապես մուտք ելինք գործել քաղաքական շարժման մեջ, ուսնելինք կողմնակիցների վորոշ շրջան հասարակության կրթված խավերում, մասնավորապես Արևմտյան Գերմանիայի մեջ, և մշտական շփում կազմակերպված պրոլետարիատի հետ։ Մենք պարտավոր ելինք գիտականորեն հիմնալորել մեր հայացքները, բայց նույնքան կարեվոր եր մեղ համար մեր կողմը դրավել յեվրոպական և, առաջին հերթին, գերմանական պրոլետարիատին։ Հենց վոր մենք մեղ համար ամեն ինչ պարզեցինք, մենք աշխատանքի անցանք։ Բյուսելում մենք հիմնեցինք գերմանական բանլորական միություն և տեր դարձանք «Բյուսելի գերմանական լրագրին»։

Մարքսի և Ենդելսի հետհեղելյան փիլիսոփայության քննադատության վերնագիրն եր «Գերմանական իդեոլոգիան», նորագույն գերմանական փիլիսոփայութան քննադատությունը ի գեմս նրա ներկայացուցիչներ՝ Ֆյուրբախի, Բրունո Բառուերի և Շտիոների, ինչպես և գերմանական սոցիալիզմի քննադատությունը։ Աշխատությունը վոչ միայն լույս չտեսավ, այլև յենթարկվեց «միների կրծող քննադատության», այդ աշխատությունից մեղ հասել ելին միայն հատվածներ։

Հարցոյն ամի և, վոր Մարքսի և Ենդելսի մահից հետո նրանց գրական ժառանգությունն անցավ գերմանա-

կան սոցիալ-դեմոկրատիայի ձեռքը։ Մարքսիզմի աղճատման խնդրից մզված՝ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի տեսաբանները չեն հրապարակում և շարունակում են թագցնել զիտական սոցիալիզմի հիմնադիրների միջարք կարեռագույն ձեռագրերը, վորոնց թվում և «Գերմանական իդեոլոգիան»։ Միայն կորհը թվային Միության մեջ, պրոլետարական դիկտատուրայի որով, հանրավոր յեղավ Մարքսի և Ենդելսի աշխատությունների լրիվ հրատարակման դորձն իրականացնել։ «Գերմանական իդեոլոգիան» ավելի լրիվ տեսքով, քան հայտնի յեղել մինչ խորհրդային հրատարական նաև հայտնի յեղել մինչ խորհրդային հրատարակությունները, մտավ Մարքսի և Ենդելսի յերկերի ժողովածուի մեջ։

«Գերմանական իդեոլոգիայի» առաջին մասի մեջ Մարքսն ու Ենդելսը քննադատության են յենթարկում և. Ֆյուրբախի, Բրունո Բառուերի, Մաքս Շտիոների—գերմանական հետհեղելյան փիլիսոփայության այդ ներկայացուցիչների հայացքները։ Իսկ յերկրորդ մասում նրանք վեր են լուծում գերմանական կամ «ճշմարիտ սոցիալիզմը»։

Հեղելի (1770—1831) — գերմանական դասական իդեալիզմի այդ խոչը ներկայացուցչի մահից հետո իդեալիզմի այդ խոչը նուանքների կողմնակիցնենք բաժանվեցին յերեք հոսանքների՝ աջ, կենտրոնի և ձախ հոսանքների։ Պառակտման պատճառը ծագած տարածայնություններն ելին Հեղելի ուսմունքի մեկնաբանության չուրջը։ Հեղելականության աջ հոսանքը աշնության չուրջը։ Հեղելականության աջ հոսանքը մեկնաբանել քրիստոնեական յեկեղեցու վորով։ Այդ հոսանքը պաշտպանում եր Հեղելի ուսմունքը մեկնաբանության յեկեղեցու վորով։ Այդ հոսանքը պաշտպանում եր անձնավոր աստծու գաղտփարը

Հոգու անմահությունը : Կենտրոնը հակվում եր դեպի պանթիզմը, իսկ ձախ հոսանքի ներկայացուցիչները՝ Շտրառուսը, Ֆյոներախիը և Բրունո Բառերը, Հեղելի ուսմունքից յենելով, արմատական և աթեփստական յեղակացություններ եյին անում : 1835 թվին Դավիդ Շտրառուսը լույս ընծայեց «Հիսուսի կյանքը» աշխատությունը, վորի մեջ ավետարանական պատմվածքները վորակից վորակս առասպելներ : Բրունո Բառերը, ավելի արմատորեն քննադատելով քրիստոնեյությունը, հայտնում եր այն միտքը, վոր ավետարանական պատմվածքները պարզապես հօրինված ստից ևն հյուսված . այդ պատմվածքները Փիկցիաներ են, վոր ստեղծված են ավետարանականների կողմից : Յերիտասարդ հեղելականներից ամենանշանավորը Լյուդվիկ Ֆյոներախն եր . մինչդեռ Շտրառուսը, Բրունո Բառերը, Շտիռները կանգնած եյին իդեալիստական հողի վրա, և Ֆյոներախը վճռական շրջադարձ կատարեց իդեալիցից դեպի մատերիալիզմը : 1841 թվին նա հրապարակեց «Քրիստոնեյության եյությունը», իսկ 1843 թվին «Ապագայի փիլիսոփայության հիմնական դրությունները» : Ֆյոներախի այդ աշխատությունները մեծ ազդեցություն ունեյին ժամանակակիցների վրա . պետք եր ապրել այդ գրքերի աղատագրական ազդեցությունը, — դրում կը հետագայում Ենդելսը Ֆյոներախի այդ աշխատությունների մասին : «Մենք անմիջապես Փյոներախի գարձանք» :

Հեղելի հետևորդների շրջանում ծագած տարածայնություններն աստվածաբանական հարցերի շուրջը շուտով փոխադրվեցին իրավունքի, պետության բնագավառները : Հեղելականների աջ հոսանքը, ինչպես և

կենտրոնը, քաղաքականության մեջ պահպանողական-ներ եյին . նրանք պահպանողական հայեցակետով եյին մեր եյին . նրանք պահպանողական հայեցակետով եյին մեր իրավունքի և պետության կարևոր հարցերը : քննում իրավունքի և պետության կարևոր հարցերը : իսկ ձախ հեղելականների քաղաքական ըմբռնումներն արմատական եյին ու առաջադեմ :

Մարքսն ու Ենդելսը պատկանում եյին ձախ հեղելականների հօսանքին, յերբ նրանք վոտք դրին դրական-հասարակական ասպարեզ : Սակայն շուտով նրանք կան մասարակական ասպարեզ : Սակայն շուտով նրանք բրնում են ձախ հեղելականության, հետևապես և հերունում են ձախ հեղելականության լինթացքը : գելյան փիլիսոփայության քննադատության լինթացքը : Այդ քննադատությանը Մարքսը ձեռնամուխ և լինում Այդ քննադատությանը մեջ կիլիսոփայության նախ ինքը՝ «Իրավունքի հեղելյան փիլիսոփայության քննադատությունը» գրելով, իսկ հետո Ենդելսի հետ՝ քննադատությունը» գրելով, այս աշխատավանիքը՝ «Սրբազն ընտանիքը» շարադրելով : Այդ աշխատավանիքը՝ մեջ տակալին զգացվում ե Ֆյոներախի տությունների մեջ տակալին զգացվում ե Ֆյոներախի աղղեցությունը» : Սակայն «Գերմանական իդեոլոգիա-աղղեցությունը» Մարքսն ու Ենդելսը ջախջախիչ քննադատության յում» Մարքսն ու Ենդելսը ջախջախիչ իդեալիստական հաւեն յենթարկում Բրունո Բառերի իդեալիստական հաւեն յացքները, ինչպես և Փյոներախիան մատերիալիզմը :

Դեռ ևս 1845 թվի գարնանը Մարքսը կաղմել եր իր նշանավոր թեղիսները Ֆյոներախի մասին : Այդ թեղիստ նշանավոր թեղիսները Ֆյոներախի մասին : Այդ թեղիստ ները, Ենդելսի արտահայտությամբ, հանդիսանում են ները, Ենդելսի արտահայտությամբ, հանդիսանում են նախնական փաստաթուղթը, վոր իր մեջ նոր աշխատական փաստաթուղթը, վոր իր մեջ նոր աշխատական փաստաթուղթը, վաղմն ե պարունակում : Այդ իսարահայացքի հանճարեղ սաղմն ե պարունակում : Այդ նոր աշխատահայացքը դիալեկտիկական մատերիալիզմը ե : Մարքսն ու Ենդելսը Փյոներախիան մատերիալիզմը դաշնում են անհետողական, վոչ ամենակողմանի, հաւագանում են անհետողական, վոչ ամենակողմանի, իցողական . Փյոներախի հիմնական թերությունը ներանք համարում են այն, վոր նա կոնկրետ յերկութերանք համարում են այն, վոր նա կոնկրետ յերկութերանք համարում են այն, վոր իսկական գործառների աշխարհը չի դիտում իբրև պրակտիկ գործառների աշխարհը :

